**Արձանագրություն N 3**

**« ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/8Շ» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«12» մայիսի 2018թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Թամրազյանը

**I. բաց մրցույթ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին**
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

- մասնակիցները սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան ներկայացրել են հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը (տեղեկությունները),

- հանձնաժողովի քարտուղարը վերոգրյալ փաստաթղթերը (տեղեկությունները), գնահատման թերթիկների երկուական օրինակները և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը տրամադրել է հանձնաժողովի անդամներին,

- մասնակիցների որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի արձանագրվել (հայտնաբերվել) և գնահատվել է «Բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**II. բաց մրցույթ ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին և հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին**
(Կ. Գասպարյան)

2. Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

1 ին չափաբաժնի մասով - <<Վայքի ՃՇՇ>> ՓԲԸ-ին,

2-րդ - չափաբաժնի մասով <<Կապավոր>> ՍՊԸ-ին,

3-րդ - չափաբաժնի մասով - <<Վառմաշ>> ՍՊԸ և << Կոարլինի>> ՍՊԸ կոնսորցիում:

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում 10 օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

3. «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/8Շ» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 14:30-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ն.Մեսրոպյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ս. Թամրազյան